



## ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԸՆՏՐՅԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Հայ եկեղեցու աղանալոր ներկայացուցիչներից և խոշորագույն դեմքերից մեկըն է Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը:

Գեր. Տ. Գարեգին սրբազանը ծնվել է Լեւոնալին Ղարաբաղի Մաղախուզ գյուղի մի նահապետական հայ ընտանիքում 1867 թ: Սկզբնական կրթությունն ստացել է Արցախի վանքերում, եղել է նաև Շուշու թեմական դպրոցում, որտեղից իր մոր հորեղբայր Անտոն վարդապետի աջակցությամբ 1882 թ. տեղափոխվում է Ս. Էջմիածին և ընդունվում Գևորգյան ճեմարան: Ճեմարանի լսարանական բաժինն ավարտում է 1889 թ: Գ. լսարանում, 1888 թ. մի խումբ ընկերների հետ կուսակրոն սարկավադ է դառնում, իսկ չորս տարուց հետո արտասահման է ուղևորվում ուսման մեջ կատարելագործվելու և հատկապես աստվածաբանություն սովորելու: Բարձրագույն ուսումն ավարտելուց հետո 1897 թ. վերադառնում է Ս. Էջմիածին: Հանգուցյալ Խրիմյան Հայրիկին սնամիջակ և նրան ուսուցիչ է նշանակում Գեփորդյան ճեմարանում ասիանդեկու թե աստվածաբանական աղարկաներ և թե հայոց հին մատենագրություն՝ նախապես կուսակրոն քահանա ձեռնադրել տալով:

Տ. Գարեգին սրբազանը ուսուցչության հենց երկրորդ տարում, 1898 թ. ամառը մեղ, Գ. լսարան փոխադրված ուսանողներին, թվով 12 հոգու, առաջնորդեց դեպի Վայոց ձորը՝ Հայրենի հին հիշատակարաններն ուսումնասիրելու, Ժողովրդի այն Ժամանակվա նիստ ու կացի հետ ծանոթանալու, ամեն տեղ հանդես դալով բացատրողի, ոգևորողի, ներշնչողի

դերում: Մի ամսից ավելի տեղի ունեցող այս ճանապարհորդության ժամանակ ուսանողներն ավելի կարգից լնք մեր առաջնորդի հետ, որն ուշադիր կերպով հետևում էր, որպեսզի մեղ համար դժվարին չլինի այս ճանապարհորդությունը:

Այնուհետև Տ. Գարեգին սրբազանը նշանակվում է Վրաստանի հայոց թեմի կառավարիչ: Կարճատև ժամանակով արդ սրբազանը վարելուց հետո Տ. Գարեգին սրբազանն ընտրվում է Երևանի թեմական դպրոցի տեսուչ 3. տարի ժամանակով՝ 1901—1904 թ. Հաջորդ 1905—06 ուս. տարում նշանակվում է Գեփորդյան ճեմարանի տեսուչ, որը վերադառնալով 1915 թ. և չարտնաչվում մինչև 1917 թ. վերջը, մինչև ճեմարանի փակումը, երբ քաղաքական խռովահույզ ժամանակն անհնարին դարձրեց ճեմարանում ուսման խաղաղ աշխատանքը:

1906—1914 թ. թ. Գարեգին սրբազանը մեծ մասամբ զբաղվել է դրական աշխատանքներով, հարկավոր դեպքում ճանապարհորդություններ կատարելով արտասահմանում: Տ. Գարեգին Սրբազանի կյանքում քիչ չեն դեպքեր, երբ անհրաժեշտության թեխորդանքով դրական աշխատանքները դադարեցնում էր և նետվում դեպի կենդանի դուր՝ տառապյալ հարազատ հայ ժողովրդի բյուրավոր ցավերը մեղմելու համար: Այսպես, օրինակ, մեծ սպանդի տարին 1915 թ. ամառը, երբ վասպուրականից մեծ դաղթականություն եկավ Ս. Էջմիածին, նա անմիջապես ձեռնամուխ եղավ լայն մասշտաբով օգնություն կադմակերպելու: Այդ կադմակերպությունն նախագահը Տ. Գարեգին



Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

սրբազանն էր: Հանդիսանալով իսկական բարի հովիվ իր բազմատանջ ժողովրդի Տ. Գարեգին սրբազանը այդ օրերին հաղարավոր կյանքներ փրկեց գերավելով հայության սերն ու համակրանքը: 1917 թ. քսան տարվա վարդապետութունից հետո հանգ. Գեվորգ Ե. նրան հախկոպտո է ձեռնադրում:

1918-ի ահեղ օրերին, երբ գերմանա-սուլթանական հավիտակիչները իմպերիալիստական մոլեգին ցնորքներով կուրացած արշավանք կազմակերպեցին Անդրկովկասի վրա կամենալով իսպառ վերացնել հայ ժողովուրդը մեջտեղից, Տ. Գարեգին Սըրբազանը անձնուրաց նվիրվածությամբ դուրս եկավ քաջակերելու և խրախուսելու հայ ժողովրդի սակավաթիվ մարտիկներին՝ չընկճվել և չթուրանալ, այլ քաջությամբ դիմադրել չարանենդ գեղատիչներին վտարելու մեր երկրից: Այդ ահալոր տարվա մայիս ամսին մենք տեսել ենք նրան Վաղարշապատում ձի նստած, վեղարը գլխին դնալի արևմուտք ունալիս: Հուզմունքից չէր կարողանում խոսել: Մեր հարցին՝ ո՞ր, սրբազանը միայն ձեռքի շարժումով պատասխանեց մտրակն ուղղելով դեպի Սարգարաթա: Եվ այնտեղ, խրամատներում, ինչպես հետո ակնատեսները պատմեցին մեզ, որպես մի նոր հայրենասեր Ղևոնդ երեց, խաչը ձևին ոգեշնչում էր զորքին քաջությամբ կռվել հայրենիքի, եկեղեցու, ժողովրդի և իրենց ընտանիքների ավատության համար: Նրա օրինակը հուզում էր բոլորին և ամենքը ծնկաչոք երգում էին մինչև վերջին շունչը կռվել: Իմպերիալիստական վոհմակները սրբաթուղիում են այս կռվի մեջ: Հուզվում է Գարեգին սրբազանը, ուրախության արցունք է վաղում նրա աչքերից և մոտիկ կանգնած անձանց հետ զրկախառնվելով ցնծությամբ բացականչում է. «Մենք հաղթեցինք»:

Գալիս է գարձալ երկրորդ ահալոր տարին՝ 1920 թ., երբ իմպերիալիստական նոր արշավանք է սկսվում տաճկական բռնակալների կողմից Անդրկովկասի վրա

այս անգամ Սարգարավիչի կողմից: Հայրենիքը նորից վտանդի մեջ է: Ինչպես կարող է նա՝ Գարեգին սրբազանը հանգիստ նստել: Եվ ահա դնում է կարս նույն միսիայով, ինչ որ 1918 թ. կարսի անկման օրերին նա այնտեղ էր և չվախենալով ոչ մի բանից, ամենայն համարձակությամբ մտնում է օտար բռնակալներին մոտ և կարողանում մասամբ մեղմել նրանց անսանձ արյունաշունթյունը: Հինգ ամիս գերության մեջ մնալուց հետո կարողանում է վաղ Լենինական և ապա Ս. Էջմիածին:

Ընդհանուր խաղաղության հաստատումից հետո Գարեգին սրբազանը նորից զբաղվում է իր սիրած դրական աշխատանքներով, միևնույն ժամանակ դործոն մասնակցություն ունենալով հանգ. Գեվորգ Ե. կաթողիկոսի հաստատած Գեբադույն խորհրդի նիստերին:

Հանդուցյալ խորեն Ա. կաթողիկոսի կողմից 1934 թ. ուղարկվում է արտասահման այցելելու Սփյուռքի հայության որպես ներկայացուցիչ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից: Իր ժրջան դործունեությամբ նա զբաղվում է արտասահմանի, հատկապես Ամերիկայի հայերի սերն ու համակրանքը և ընտրվում առաջնորդ Ամերիկայի թեմի համար 1938 թ., իսկ հինգ տարուց հետո, 1943 թ. ընտրվում է կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո:

Բացի ուսուցչական, հասարակական և հոգևոր այս ամենարեղծնալոր դործունեությունից, գեր. Գարեգին սրբազանը հայտնի է մեզ իր բազմաթիվ գրական աշխատանքներով և գիտական ուսումնասիրություններով, որոնք տպվել են գլխավորապես Մայր Աթոռի Հայրապետական «Արարատ» ամսագրում կամ լույս են տեսել առանձին: Այս աշխատանքները մեծ արժեք ունեն և ընդգրկում են մեր գրականության բոլոր բնագավառները՝ ժողովրդական, բանասիրական, կրոնական-եկեղեցական, պատմական-բանասիրական, մատենագրական, պատմա-հնագիտական և այլն:

Գիտական այդ լուրջ աշխատանքները

խոչոր նյութ են մատակարարում մեր կուլտուրայով զբաղվող գիտնականներին՝ հատկապես հայկական մանրանկարչության ընթացակառույցում:

Ի վերջո հիշենք, որ Տ. Գարեգին արքեպիսկոպոսի սրբազան Հայրենասիրությունը Հայրենական մեծ պատերազմին ևս բուռն թափով հանդես եկավ: Գարեգին սրբազանը հեռավոր Ամերիկայում իր ջերմ Հայրենասիրական մասնակցությունը երեւման բերեց մեր Մեծ Միութեան ժողովուրդների, դրանց թվում հայ ժողովրդի սղատութեան և անկախութեան համար մղվող պատերազմի օգտին: Գեր. Սրբազանը Ամերիկայում դրամական մեծ գու-

մար է հախաքում կարմիր բանակի «Սասունցի Դավիթ» տանկային շարայան համար: Հանգանակությունը դեռ շարունակվում է:

Թող երկար ապրի Գարեգին սրբազանը սիրո այն բուռն զգացմունքով, որ տածում է դեպի Մայր Հայրենիք Սովետական Հայաստանը, դեպի համազգային ընդհանրական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և դեպի իր հարազատ հայ ժողովուրդը, որոնք Տ. Գարեգին սրբազանի երկար բեղմնավոր կյանքի բովանդակությունն են կազմել, որոնց նվերել է իր ամբողջ կյանքը և որոնցով ապրում է հիմա Տ. Գարեգին Սրբազանը:

ՃԵՄԱՐԱՆՑԻ

